ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԵԿՏՈՐ,
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ,
ՊՐՈՖԵՍՈՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ
Հայ հին և միջնադարյան գրականության և նրա
դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստի «23» հունիսի 2022թ.

Քննարկվել է Աննա Վարդանի Ստեփանյանի «Հեղինակային հայեցակարգը և սուրբգրային կանոնը հայ միջնադարյան քնարերգության մեջ» թեկնածուական ատենախոսությունը: Քննարկմանը մասնակցել են հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Դոլուխանյանը, բան. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Հովսեփյանը, մանկ.գիտ. թեկնածու, դոցենտներ (երկուսն էլ գրականության դասավանդման մեթոդիկայի գծով) Ռ.Դոլուխանյանը, Գ.Մարդյանը:

Աննա Ստեփանյանի «Հեղինակային հայեցակարգը և սուրբգրային կանոնը հայ միջնադարյան քնարերգության մեջ» թեկնածուական ատենախոսությունն իր առաջադրած թեմատիկայով նորություն է, իսկ նյութի ընդգրկման ծավալով (ողջ հայ միջնադարի քնարերգություն V-XVIII դարեր) վիթխարի: Սա միջնադարին վերաբերող տեսական ընդհանրացումներ և սահմանումներ պահանջող հետազոտություն է: Թեման բաժանված է նպատակահարմար՝ ներածության և 4 գլուխների միջև և ունի ուսումնասիրությունից բխող եզրակացություններ:

Հայ միջնադարյան բանաստեղծության պաշտոնական տեսակը բնականաբար առնչվում է Աստվածաշնչի Հին ու Նոր Կտակարանների, նաև աստվածաբանական, փիլիսոփայական աշխատությունների հետ՝ հայկական և թարգմանական:

Քրիստոնեական սուրբգրային բանաստեղծական խոսքը ողջ միջնադարում ենթարկվել է փոփոխությունների, և դրանք կատարվել են ըստ հեղինակային հայեցակարգի:

Միջնադարն ունի մտածողության մեծաքանակ գաղտնիքներ, որոնք փորձում են բացատրել ու մեկնաբանել միջնադարի գրականության մասնագետները: Այդ մեկնաբանությունները ևս էվոլուցիոն շրջադարձեր ունեն: Բավական է կարդալ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի մեկնությունը ըստ հարգարժան Մ. Մկրյանի ուսումնասիրության և նույն երկի բազմակողմանի բացատրություններն ըստ Ժ.-Պ. Մահեի գրքի:

Աննա Ստեփանյանն իր հետազոտության մեջ օգտագործել է բազմաթիվ բանասիրական ուսումնասիրություններ ու աշխատանքը շարադրել է պատմահամեմատական մեթոդով:

Աշխատանքում տեսնում ենք սուրբգրային կանոնի ընկալման փոփոխությունները, խորհրդանիշների ապախորհրդանիշ դառնալը՝ ինչպես, օրինակ, վարդի և բլբուլի երգերում: Տեսանելի ձևով ներկայացված են հեղինակային կրկնությունները տարբեր դարերի բանաստեղծների մոտ: Երևույթը զուգահեռաբար դիտարկված է Պրովանսի տրուբադուրների և գերմանական ժողովրդական երգիչների մոտ:

Հետազոտողը լայնացրել է սուրբգրային բանաստեղծության ընդգրկումները՝ նրանցում ներառելով ժողովրդական կաֆաներն ու հայրենները:

Սա հասկանալի է, որովհետև պաշտոնական գրականությունը ներկայացնող հոգևոր երգիչները գրել են նաև կաֆաներ և ստեղծագործել են հայրենների տաղաչափությամբ:

XI-XII դարերի փիլիսոփա, բնագետ, մանկավարժ, բանաստեղծ, եկեղեցական նշանավոր գործիչ Հովհաննես Սարկավագի «Բան իմաստութեան...» քերթվածը հանգամանալի քննության է ենթարկվել հետևյալ կտրվածքով՝ «Կյանքի ու մահվան, հայտնության ու ազատության փիլիսոփայական խորհուրդը Հովհաննես Սարկավագի «Բան իմաստութեան առ ձագն, որ կոչի սարիկ» խոհափիլիսոփայական պոեմում»:

Հետազոտողն իրավացիորեն քննել է Հովհաննես Սարկավագի նշված քերթվածի նոր ու էական փոփոխություններով հարստացված տարբերակը, որը հրատարակել է միջնադարագետ Գևորգ Տեր-Վարդանյանը: Բնականաբար Աննա Ստեփանյանի աշխատանքում տեղին հղումներ կան Փիլոն Ալեքսանդրացու, Դավիթ Անհաղթի, Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու աշխատություններին՝ ելակետային հիմքով:

Ատենախոսության վերջին՝ չորրորդ գլուխը, ներկայացնում է թեմաների կրկնությունը, սուրբգրային բանաստեղծությունից շեղումներ կատարած ուշ միջնադարի քնարերգությունը, որը, սակայն, լիովին պահպանում է իր քրիստոնեական ուղղվածությունը:

Երիտասարդ հետազոտողին հաջողվել է ընդհանրացնել իր խոսքը և տալ հնարավորինս ամբողջական հետազոտություն: Այս առումով թեկնածուական ատենախոսությունը հաջողված է և արժանի է հրապարակային պաշտպանության:

Աշխատանքի վերաբերյալ կարելի է թվարկել մի շարք թերացումներ, որոնք ատենախոսությունը տպագրվելու դեպքում արժե ուղղել: Սրանք հեշտ ուղղելի թերացումներ են:

Աշխատանքի բովանդակության մեջ նշված և ոչ մի էջ չի համապատասխանում ատենախոսության էջերին:

Անհասկանալի է՝ ինչ տրամաբանությամբ են շարադրանքում նախապատվություն տրվել կաֆայի և այդ հիմքի վրա՝ հայրենի ժանրերին: Մի՞թե չէր

կարելի առավել ամբողջական պատկերացում տալու նպատակով (ատենախոսը հավակնում է քննել միջնադարի ողջ քնարերգությունը) ուսումնասիրության շրջանակ ընդգրկել ներբողյանի, ողբի ժանրերը կամ գոնե բացատրվեր՝ ինչու է նախապատվություն տրվում այս կամ այլ ժանրի:

Գրականության ցանկն ամբողջովին սրբագրելի է:

Առանձնացրած հետևյալ բաժիններից՝ **«Գեղարվեստական երկեր»**, **«Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրեր»** (առանց ընդգծելու), **«Գիտական աղբյուրներ»**, **«Պարբերականներ»**, **«Ատենախոսություններ»**, **«Բառարաններ և էլեկտրոնային աղբյուրներ»** (առանց ընդգծելու) սխալ է **«Գեղարվեստական երկեր»**, **«Գիտական աղբյուրներ»**, **«Պարբերականներ»**, **«Բառարաններ և էլեկտրոնային աղբյուրներ»** բաժինների բաժանումը:

«Գեղարվեստական երկեր» բաժնում ներկայացվում են սկզբնաղբյուրներ, ու նշվածները որևէ կապ չունեն գեղարվեստական գրականության հետ: Խորագիրը պետք է խմբագրվի **«Սկզբնաղբյուրներ»** ձևով:

«Գիտական աղբյուրների» տակ ներկայացվում են **ուսումնասիրություններ:** Մ.Աբեղյանի, Ֆ.Բախչինյանի և Ա.Դոլուխանյանի մեջբերված երկերը գիտական ուսումնասիրություններ են, ոչ թե աղբյուրներ: Խորագիրը պետք է խմբագրվի՝ **«Ուսումնասիրություններ»**:

Գովելի է, երբ գրականության ցանկը հարուստ է և բազմալեզու, սակայն տրամաբանությունից դուրս, երբ նույն աղբյուրը կիրառվում է երկու տարբեր հրատարակչություններով (հղումներն արվել են նույն բնագրից, այլ ոչ կազմողի դիտարկումներից կամ առաջաբաններից). Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, տպ. Ն.Աղանեանի, 1914, 488 էջ: Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, Սուրբն Ղազար, 1835, 686 էջ: Լավ կլիներ հղել Մատենագիրք Հայոց մատենաշարով հրատարակված քննական բնագիրը:

Նույն երևույթը Մանուկ Աբեղյանի «Հայոց հին գրականության պատմություն», Գիրք երկրորդ (1959 և 2004 թթ. հրատարակություններ) ուսումնասիրության դեպքում է (տե՛ս գրակ. ցանկ «Գիտական աղբյուրներ» հմրք. 1, 2, էջ 160):

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Աննա Վարդանի Ստեփանյանի «Հեղինակային հայեցակարգը և սուրբգրային կանոնը հայ միջնադարյան քնարերգության մեջ» թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է Ժ.01.01-«Հայ միջնադարյան և նոր գրականություն» մասնագիտության թվանիշին, և նրա հեղինակն արժանի է ստանալու բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսությանը:

Որոշումն ընդունվել է միաձայն: Ատենախոսության վերաբերյալ ելույթ են ունեցել հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բան. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա.Դոլուխանյանը, բան. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Հովսեփյանը, մանկ.գիտ.

թեկնածու, դոցենտներ (երկուսն էլ գրականության դասավանդման մեթոդիկայի գծով) Ռ.Դոլուխանյանը, Գ.Մարդյանը:

ՀԱՅ ՀԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱ ԴԱՍ.ՄԵԹ.
ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ, ՀՀ ԳԱԱ ԹՂԹԱԿԻՑ ԱՆԴԱՄ,
ԲԱՆ.ԳԻՏ.ԴՈԿՏՈՐ,ՊՐՈՖԵՍՈՐ՝ ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Պրոֆ.Ա.Դոլուխանյանի
ստորագրությունը հաստատում եմ՝

ԳԻՏ.ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ